հիւսիսային մասը մտցուած է Ֆրանսական զօտու մէջ»։

Այս զիջումն անելով անգլիացիների նը-պատակն էր գոհացում տալ ռուսների բաղձանքին, որ՝

Ա. Նեստորական շրջանը եւ Բիթլիսի կիրճը պահուի ռուսների ձեռքին։

Բ. Մտցուի ռուսական հողամասի մէջ, որպէս լրացում, Հայաստանի նուազագոյն մէկ մասը, իբրեւ պահանջ Էրզրումի ապահովութեան Ռուսաստանի ձեռքին, եւ ուրիշ աշխարհագրական պայմանների. (157)։

Այս զիջումները արւում են որպէս հետեւանք այն բանակցութիւնների, որ անգլիական արտակարգ լիազօր Սըր Մարկ Սայքսը եւ Ֆրանսական ներկայացուցիչ Պիկօն նոյն օրերին վարում էին Պետերոգրատում ռուս կառավարութեան հետ։

Մարտ 12-ին, Սըր Սայքսը տալիս է Սըր Բիւկենենին չափից աւելի հետաքրքրական եւ այժմ արդէն պատմական դարձած մի տեղեկագիր, որ առաջ ենք բերում ամբողջովին.—

«Մտածելով նոր առաջադրութեան*) մասին, այսինքն, որ Սըվազը մտցուի Կապոյտ Գօտու մէջ՝ հանուող Հէքքեարիի փոխարէն՝ ես եկայ այն եզրակացութեան, որ հետեւեալ կէտերը կարող են լինել հետաքրքրական պ. Սազոնովի համար.

«1) Ինձ թւում է, որ մենք պէտք է ընդունինք, որ, իբրեւ հետեւանք հայկական վերջին կոտորածների ծայրայեղ խստութեան ու անսրտութեան, անկարելի է թոյլ տալ բուն Հայաստանը օսմանեան իշխանութեան տակ պահելու հնարաւորութիւնը։ Նման ծրագիրը, անդամ եթէ բարենորոգումներ էլ մտցուին, գաղում եւ պրակտիկում առաջ կը բերէ Անգլիայում եւ Միացեալ Նահանգներում եւ զէնք կուտայ հաչտութիւնից բոլոր դժգոհներին։

2) Ուստի հայկական հարցի լուծումը կարող է լինել

ա) Թիւրքական վեհապետութեան ներքոյ գտնուող հայկական պետութեան ստեղծումը, որ կ'ենթադրէ կամ մի երկրորդ Բուլգարիայի ստեղծում, որ որոգայթներ պիտի լարէ Կովկասում, կամ անկենսունակ ծրագիր՝ ի նկատի ունենալով, որ հայերը ընդունակ չեն մրցելու քիւրդերի հետ.

բ) Միջազգային հակակշռի տակ գտնուող չէզոք(?) *) վարիչներով հայկական կառավարութեան ստեղծումը, որ լայն ասպարէզ կը բանայ մշտական խարդաւանութիւնների ու «հարցերի», որից վաղ թէ ուշ օգուտ կը քաղէ Գերմանիան։

գ) Հայաստանի չնախապատրաստուած ու ամբողջական յանձնումը Ռուսաստանին հետեւանք կ'ունենայ այն, որ ռուսական քաղաքական դրութեան մէջ կը մտցուի մի երկիր, որ լեցուն է յեղափոխական ընկերութիւններով, որոնք մշտական յարաբերութիւնների մէջ են Կովկասում եւ Պարսկաստանում գոյութիւն ունեցող յեղափոխական կազմակերպութիւնների հետ։ Մի հայ յեղափոխական (Դաշնակ) մի անգամ ասում էր ինձ, թէ այդ կը լինէր հրաչալի բան, թէ այն օրից, որ ամբողջ հայ ազգաբնակութիւնը ընկնի ռուսական տիրապետութեան տակ, յեղափոխական ընկերութիւնները Կովկասում, Ատրպատականում ու Թիւրքիայում անմիջապէս կ'ամրանան, եւ ընդհանուր անբաւականութիւնը հերիք կը լինէր նրանց կենսունակութիւնը պահելու համար։

դ) Հարցի այնպիսի լուծում, որ նախկին հռոմէական կամ Փոքր Հայաստանն յանձնուի Ֆրանսային, իսկ սրան կցուած քարտէսի վերայ դեղին գոյնով նկարուած գօտին**) դրաւէ Ռուսաստանը։ Ես գտնում եմ որ այս ձեւը ամենից աւելի գոհացուցիչն է եւ վաղուց ի նկատի ունէի, բայց երբեք առաջ չեմ քաշել, որովհետեւ միշտ էլ այն կարծիքի եմ եղել, որ ռուսական կառավարութիւնը ձգտում է դրաւել Սըվազի շրջանը։

«Այս ծրագրի առաւելութիւնները հետեւեալն են.

1. Ռուսաստանը ստանում է Էրզրումը, Բիթլիսը եւ Վանը՝ հայ ազգաբնակութեան

*) Սազոնովի առաջարկութիւնը՝ ռուսներին թողնուելիք շրջանների սահմանները փոփոխելու մասին։

*) Հարցական նշանը դրուած է բնագրում։

**) Տաւրոսից դէպի հիւսիս գտնուող շրջանը։